

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՌԿԱ ՄԻ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Բ. Ե. ԶԱԶԱՐՅԱՆ

Հայոց ազգակցության տերմինաբանության մեջ առկա է մի երևույթ, ըստ որի որոշ տերմիններ հանդես են գալիս յուրաքանչյուրը մեկից ավելի իմաստով, որով խախտում են այդ տերմինաբանության կառուցվածքին բնորոշ գծային, սեռային և սերնդային դասակարգման սկզբունքները:

Ըստ ազգակցությունների դասակարգման սեռային սկզբունքի՝ յուրաքանչյուր ազգակցության տերմին խստորեն տարբերում է ազգակցության սեռը, հանդես գալով որոշակիորեն կամ իգական, կամ արական ազգակցության նշանակման դերում:

Ըստ ազգակցությունների դասակարգման սերնդային սկզբունքի՝ յուրաքանչյուր սերնդի ազգակցություն ֆիզիկական առումով առանձնանում է մյուս սերունդներից, դուրս չի գալիս իր սերնդի սահմաններից և չի ընդունում այլ սերունդներից:

Ըստ ազգակցությունների դասակարգման գծային սկզբունքի՝ տերմինաբանորեն միմյանցից առանձնանում են ուղիղ ու շեղ գծերի ազգակցությունները:

Ահա այս սկզբունքներն են, որ խախտվում են մի քանի տերմինների կողմից, որպիսիք են՝ **ՊԱՊ**—Հայերենում **պապը** հայտնի է առհասարակ որպես «մեծ հայր» ազգակցության նշանակման տերմին: Բայց որոշ բարբառներում այն հանդես է գալիս «հայր» ազգակցության նշանակման դերում: Այդ բարբառներն են՝

Սասունի՝ բաբ, բաբո¹, Տիգրանակերտի՝ բաբ, բաբիկ², Անտիոքի՝ բուռոբ³, Մալաթիայի՝ պապ⁴, Ջեյթունի՝ բոբ⁵, Ալաշկերտի՝ պաբ⁶, Մուշի՝ պապ⁷ և այլն:

Սակայն, միաժամանակ, ինչպես ցույց են տալիս մեր ձեռքի տակ եղած աղբյուրները, այս բարբառներում պահպանվել է «հայր» ազգակցությունը նշանակող **հայր** տերմինը, բացի, ինչպես նշում է Հր. Աձառյանը, Տիգրանակերտի բարբառից⁸:

Պապը pa > papa բնածայն բառից է, որ հատուկ է, այս կոչված, «մանկական լեզվին» և առկա է ինչպես հնդեվրոպական, այնպես էլ ոչ հնդեվրոպական լեզուներում:

«Մանկական լեզվից» առաջացած տերմիններ ասելով գիտության մեջ հասկանում են այն վանկերի կրկնավորումից առաջացած տերմինները, որոնց հիմքերը բնածայն են և առկա «մանկական լեզվի» բառապաշարում⁹:

¹ Կ. Ա. Պետոյան, Սասունի բարբառը, Եր., 1954, էջ 106:

² Ա. Ն. Հանեյան, Տիգրանակերտի բարբառը, Եր., 1978, էջ 202, Հր. Աձառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 3, Եր., 1977, էջ 32, 247, հ. 4, Եր., 1979, էջ 25:

³ Հր. Աձառյան, ՀԱԲ, հ. 4, էջ 25:

⁴ Կ. Պեննեյան, Մալաթիո տեղագրական և ազգագրական աշխատասիրությունը և Գրիգոր Մանձյանի Մալաթիո գավառաբարբառը, Ա. տ., 1899, էջ 166:

⁵ Հր. Աձառյան, ՀԱԲ, հ. 4, էջ 25:

⁶ Ս. Բաղդասարյան, Նլաթի, Բաղեշ-Բիթլիսի, Ալաշկերտի, Մանազկերտի, Բուվանդիսի, Նընուսի, Արձեշի, Արձեկի խոսվածքները: Պահվում է Հր. Աձառյանի անվ. Լեզվի ինստիտուտում (այսուհետև՝ ԼԻ), ձեռագիր № 1161, էջ 205, Հր. Աձառյան, ՀԱԲ, հ. 4, էջ 25:

⁷ Ս. Մովսիսյան (Բենսե), Սշո Բուվանդիս.—Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 3, էջ 177:

⁸ Հր. Աձառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 32:

⁹ «Մանկական լեզվի» մասին տե՛ս Հր. Աձառյան, Մանկական բարբառ.—Բանասեր, 1901, հ. 3, էջ 3—28, Օ. Ն. Трубачев, История славянских терминов родства, М., 1959, с. 192, Օ. Iespersen, Language, its Nature, Derelopment and Origin, London, 1949, p. 150—156, Werner F. Leopold, The study of Shild Language and infant Bilingualism, "Word", 1948, № 4, p. 1:

Հնդեվրոպական լեզուներում pa > papa ձևով առաջացած կազմավորումներն ունեն հիմնականում «հայր», ինչպես նաև «մեծ հայր» նշանակությունները¹⁰:

ՄԱՄ—Հայերենում մամը հայտնի է առհասարակ որպես «մեծ մայր» նշանակող տերմին, բայց որոշ բարբառներում ունի «մայր» նշանակությունը: Դրանք են՝ Տիգրանակերտի, Բուլանդի, Բյուքահայի, Ալաշկերտի բարբառները¹¹: Սակայն սրանցում միաժամանակ գոյություն ունի «մայր» ազգակցությունը նշանակող մայր տերմինը, բացի Տիգրանակերտի բարբառից, որում, ինչպես նշում է Հր. Աճառյանը, «այն բոլորովին ջնջված է»¹²:

Մամն ունի նաև «ծեր կին» իմաստ (Նոր Նախիջևան)¹³:

Մամը ma > mama բնածայն բառից է, որ հատուկ է «մանկական լեզվին» և նույնպես առկա է ինչպես հնդեվրոպական, այնպես էլ ոչ հնդեվրոպական լեզուներում:

Հնդեվրոպական լեզուներում համանման կազմավորումներն ունեն հիմնականում «մայր», նաև՝ «մորաքույր» նշանակությունները¹⁴:

SUS, ԱԴԵ, ՊԱՂՈ—Հայերենում տատը հայտնի է «մեծ մայր» իմաստով, բայց որոշ բարբառներում հանդես է գալիս այլ ազգակցությունների նշանակման դերում, այսպես՝ «հայր», «մեծ հայր». «ավագ քույր», «ավագ եղբայր»:

Որպես «հայր» նշանակող տերմին տատը հանդես է գալիս հետևյալ բարբառներում՝

Ակնի՝ տատ¹⁵, Սվեդիայի՝ դոտ¹⁶, Ատանայի՝ տատ¹⁷:

Այս բարբառներում, սակայն, տատ տերմինին զուգահեռ պահպանվել է «հայր» ազգակցությունը նշանակող հայր տերմինը, բացի Սվեդիայի բարբառից¹⁸:

Տատը «մեծ հայր» ազգակցության նշանակման դերում հանդես է գալիս հետևյալ բարբառներում՝

Մալաթիայի՝ տատա¹⁹,

Պոլսի՝ տատ²⁰,

Ակնի՝ մեծ տատ²¹ (քանի որ այս բարբառում «հայրը» նշանակվում էր տատով, դրանից էլ կազմվում է մեծ տատը՝ «մեծ հայր» իմաստով):

Եթե վերոհիշյալ բարբառներում «մեծ մայր» ազգակցության նշանակման համար հայտնի տատ տերմինով հանդես են գալիս «հայր» և «մեծ հայր» ազգակցությունները, ապա ինչպե՞ս է հանդես գալիս «մեծ մայրը»: Ըստ մեր ձեռքի տակ եղած աղբյուրների՝ պատկերը հետևյալն է.

բարբառներ	«հայր»	«մեծ հայր»	«մեծ մայր»
Ակնի	տատ	մեծ տատ	մեծ մայր ²² , մամա, քեռիմար ²³ (մոր մայր), մինձ մար ²⁴
Սվեդիայի	դոտ		
Ատանայի	տատ		
Մալաթիայի		տատա	մամա ²⁵
Պոլսի		տատ	մամ ²⁶

¹⁰ Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. 4, էջ 25:

¹¹ Ա. Ն. Հանեյան, Նշվ. աշխ., էջ 215, Ս. Մովսիսյան (Բենես), Նշվ. աշխ., էջ 176, Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 242, Նույնի՝ Հայերեն գավառական բառարան (այսուհետև՝ ԼԳԲ).— Էմինյան ազգագրական ժողովածու, Թիֆլիս, 1913, էջ 747:

¹² Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 247:

¹³ Հր. Աճառյան, ԼԳԲ, էջ 747:

¹⁴ Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 242, Գ. Բ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 300:

¹⁵ Մ. Ս. Գաբրիելյան, Ակնա գավառաբարբառը, Վիեննա, 1912, էջ 345:

¹⁶ Տ. Անդրեսայան, Սվեդիայի բարբառը, Եր., 1967, էջ 385, Նույնի՝ Սվեդիայի բարբառը կամ Զիսթինգի լեզուն, ԼԻ, ձեռագիր № 1157, էջ 168, 178:

¹⁷ Հր. Աճառյան, ԼԳԲ, էջ 1016:

¹⁸ Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 32:

¹⁹ Կ. Պեննեյան, Մալաթիո տեղագրական..., էջ 170, 270, Նույնի՝ Սելիտինեի հայոց գավառաբարբառը: Պահվում է Երևանի պետական համալսարանում (այսուհետև՝ ԵՊՀ), ձեռագիր № 474, էջ 300:

²⁰ Թեոդիկ, Պոլսի հայեվարը, ԵՊՀ, ձեռագիր № 39, էջ 2155:

²¹ Յ. Կ. Ծանիկյան, Հնությունը Ակնա, Թիֆլիս, 1895, էջ 330:

²² Նույն տեղում:

²³ Մ. Ս. Գաբրիելյան, Նշվ. աշխ., էջ 315, 388:

²⁴ Տ. Անդրեսայան, Սվեդիայի բարբառը կամ Զիսթինգի լեզուն, էջ 131:

²⁵ Կ. Պեննեյան, Մալաթիո տեղագրական..., էջ 264:

²⁶ Հր. Աճառյան, Զննություն պոլսահայ բարբառի, Եր. 1941, էջ 214:

Օրինակներից պարզ է դառնում, որ, երբ տատ տերմինը հանդես է գալիս «հայր» կամ «մեծ հայր» ազգակցությունների նշանակման դերում, «մեծ մայր» ազգակցությունը նշանակվում է այլ տերմիններով և ոչ թե տատով, որ ընդունված է առհասարակ: Այնպես որ «հայր» և «մեծ հայր» ազգակցությունների նշանակումը տատով բավականին որոշակի է:

Հր. Ածառյանն իր «Արմատական բառարանում» վկայում է, որ մյուս ազգակցությունների շարքում տատը հանդես է գալիս նաև «ավագ եղբայր» ազգակցության նշանակման դերում, բայց թե ո՞ր բարբառներում, չի նշում²⁷: Միայն «Գավառական բառարանում» է, որ որպես այդպիսին նշում է Սիվրիհիսարի բարբառը²⁸: Կասկած չկա դրա՝ հիշատակման տերմին լինելու մասին²⁹, քանի որ բառահոդվածում նշված է նաև նրա դիմման ձևը՝ տատը³⁰:

Տատան Հր. Ածառյանը վկայում է նաև որպես «քույր» ազգակցության նշանակման, տերմին³⁰, բայց չի նշում, թե ո՞ր բարբառներում: Այլ աղբյուրներում տատան որպես «ավագ քույր» նշանակող տերմին է նշվում Վանի բարբառում³¹:

Տատն այլ տերմինի կազմում՝ պարոնտատ ձևով, հանդես է գալիս որպես «ամուսնու հայր» (Պոլսի, Ակնի բարբառներ)³² և «ամուսնու եղբայր» (Կիլիկիայի բարբառ)³³ իմաստներով: Այլ տերմինի հետ այդ դերում հանդես գալը պատահական չէ, քանի որ առաջին երկու բարբառում, ինչպես վերը նշվեց, այն հանդես է գալիս համապատասխանաբար «մեծ հայր» և «հայր» ազգակցությունների նշանակման դերում:

Այնպես, ինչպես այս բարբառներում տատ տերմինի «մեծ հայր» և «հայր» նշանակությունները կարող էին հանգեցնել «ամուսնու հայր» նշանակող պարոնտատ տերմինի առաջացմանը, այնպես էլ ըստ Կիլիկիայի բարբառում առկա «ամուսնու եղբայր»—պարոնտատ՝ պիտի ենթադրենք նրանում ևս տատ տերմինի «հայր» կամ «մեծ հայր» նշանակության առկայությունը (թե՛ս նկատի չունենանք, որ բացառված չէ պարոնտատի այլ բաղբառից փոխառված լինելը):

Այսպիսով, տատը, որ առաջին հերթին ընդունված է և ընկալվում է որպես իգական ազգակցություն նշանակող տերմին, հանդես է եկել նաև որպես արական ազգակցությունը նշանակող և այն էլ՝ ազգակցության տարբեր աստիճաններում:

Այս բարբառներում սովորական է եղել նրա՝ որպես արական տերմինի ընկալումը:

Նշենք նաև, որ Հր. Ածառյանը Սվեդիայի և Տիգրանակերտի բարբառների թվում նշում է նաև Ռարբերդի բարբառը, որում «հայր» տերմինը փոխարինված է պապով կամ տատով³⁴, բայց թե այս երկու տերմիններից ո՞ր մեկով, հայտնի չէ: Մեր ձեռքի տակ եղած միակ աղբյուրը, որ վերաբերում է Ռարբերդի բարբառին³⁵, չի պատասխանում այդ հարցին: Բայց՝ այստեղ այնքան կարևոր չէ, թե հայր տերմինն ինչով է փոխարինված, որքան նրա այդ բարբառում և գոյություն չունենալը և նշված տերմիններից մեկով փոխարինված լինելը:

Տատը ta > tata նախաձևից է, որ նույնպես բնաձայն բառ է, հատուկ «մանկական լեզվին» և առկա է թե հնդեվրոպական և թե ոչ հնդեվրոպական լեզուներում:

Հնդեվրոպական լեզուներում համանման կազմավորումներն ունեն «հայր», «մեծ հայր», «հորաքույր» և այլ իմաստներ³⁶:

²⁷ Հր. Ածառյան, ՀԱԲ, հ. 4, էջ 379: Տե՛ս նաև Ա. Յ. Ալվազյան, Բառանմուշ, Կ. Պոլիս, 1899, էջ 34:

²⁸ Հր. Ածառյան, ՀԳԲ, էջ 1016:

²⁹ Ցանկացած համակարգի համար կարևորություն են ներկայացնում հիշատակման տերմինները: Նշենք, որ յուրաքանչյուր ազգակցության համակարգ բաղկացած է երկու ենթահամակարգերից՝ հիշատակման և դիմման: Ըստ սրա էլ տարբերվում են հիշատակման և դիմման տերմինները: Հիշատակման տերմինները ցույց են տալիս ազգակցական կապերը և ազգակցության հեռավորության աստիճանները, ստույգ բացահայտում ազգակցական հարաբերությունները երկու անձնավորությունների միջև: Պիմման տերմինները ցույց են տալիս, թե ինչպես մի անհատը կարող է դիմել մյուսին՝ կախված ազգակցական հարաբերությունների կառուցվածքում նրանց գրաված տեղից, տարիքային, սոցիալական և կենցաղային առանձնահատկություններից, միմյանց նկատմամբ ունեցած վերաբերմունքից:

³⁰ Հր. Ածառյան, ՀԱԲ, հ. 4, էջ 379:

³¹ Մ. Տևկանց, ժողովրդական բառարան Վանա, ԵՊՀ, ձեռագիր № 472, մասն 1, էջ 190, Ռ. Անտյան, Բանալի Պապենի բարբառներու, ԵՊՀ, ձեռագիր № 467, էջ 173, Ս. Անանյան, Բառարան արդի վանեցվոց լեզվի, ԵՊՀ, ձեռագիր № 422, էջ 312:

³² Թեղդիկ, Նշվ. աշխ., էջ 1857, Յ. Կ. Ճանիկյան, Նշվ. աշխ., էջ 330:

³³ Կ. Գաբիկյան, Բառգիրք Սեբաստիայի գավառալեզվի, Երուսաղեմ, 1952, էջ 465:

³⁴ Հր. Ածառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 32:

³⁵ Գ. Կ. Դանիելյան, Ռարբերդի գավառաբարբառը, ԵՊՀ, ձեռագիր № 471:

³⁶ Հր. Ածառյան, ՀԱԲ, հ. 4, էջ 379:

Tata-ին համանման բնածայն բառ է *atta-ն*, որը հնդեվրոպական լեզուներում իմաստակա-
նում ունի «հայր», իսկ մեկ դեպքում (սանսկրիտում)՝ «մայր» և «մեծ քույր» իմաստները:
Բնածայն նման բառեր կան նաև ոչ հնդեվրոպական լեզուներում³⁷:

Կարծում ենք, որ հայերեն բարբառներում «մայր» նշանակող *ադե* (Նոր Բայազետ, Կա-
րին)³⁸, *ատե* (Ջելթուն)³⁹, *ատտա* (Ակն)⁴⁰, և «ձեր կին» նշանակող *ատո* (Մուշ)⁴¹ տերմին-
ների հիմքը Նույն *atta* բնածայն բառն է: Այս բոլոր բարբառներում միաժամանակ առկա է
«մայր» նշանակող *մայր* տերմինը:

Tata-ին համանման բնածայն բառ է *dhe > dhē—dhe-ն*, որով կազմված տերմինները
հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական լեզուներում ունեն «հայր», «մայր», «մեծ մայր», «մեծ
հայր», «մորաքույր», «հորեղբայր, մորեղբայր», «ավագ քույր» և այլ նշանակություններ⁴²:

Այս հիմքով կազմված տերմինները շատ են հատկապես սլավոնական լեզուներում, այս-
պես՝ բուլղարերենում, մակեդոներենում, սերբախորվաթերենում՝ «ավագ քույր» (*dada*), սեր-
բախորվաթերենում՝ բարբառային «մայր» (*dóda*), «հայր» (*dádo*), «մայր, ավագ քույր»
(*dóda*), Նոր լուծիչերենում՝ բարբառային «մեծ մայր» (*dowda*), ռուսերենում՝ «հորեղբայր,
մորեղբայր» (дядя), ուկրաիներենում՝ բարբառային «հայր» (*d'od'a*) և այլն⁴³:

Հայոց բարբառային ազգակցության տերմինաբանության մեջ *դադոն* և նրա տարբերակնե-
րը հանդես են գալիս մի շարք իմաստներով: Այսպես՝

«հայր»—*դադոն*՝ Վանի, Խիզանի⁴⁴,

«մայր»—*դադե*՝ Սասունի⁴⁵,

«մեծ մայր»—*դադե*՝ Վանի, Բուլանջիսի⁴⁶,

«մեծ քույր»— $\left\{ \begin{array}{l} \text{դադոն} \text{ Խոյի, Սալմաստի, Ղարաբաղի}^{47}, \\ \text{դադա} \text{ Մեղրու}^{48} \text{ բարբառներում:} \end{array} \right.$

Այս բարբառներում գոյություն ունեն նաև նշված ազգակցությունները նշանակող նորմա-
տիկ տերմինները⁴⁹:

ԿԱԿՈ—Սա իր տարբերակներով հանդես է գալիս մի քանի նշանակությամբ: Այսպես՝

«հայր»— $\left\{ \begin{array}{l} \text{կակե} \text{ Մշո, կկե} \text{ Լոռվա}^{50}, \\ \text{կակո} \text{ Ճատախի}^{51}, \end{array} \right.$

«հորեղբայր»—*կակո*՝ Սասունի, Մոկսի, Խոյի, Սալմաստի, Նոր Բայազետի⁵²,

«մեծ հայր»—*կակո*՝ Վանի⁵³ բարբառներում:

³⁷ Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 32, Գ. Բ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածու-
թյուն, էջ 300:

³⁸ Հր. Աճառյան, ՀԳԲ, էջ 46, Մ. Հ. Մկրտչյան, Կարևո բարբառը, Եր., 1952, էջ 118:

³⁹ Հր. Աճառյան, ՀԳԲ, էջ 46:

⁴⁰ Յ. Կ. Ծանիկյան, Նշվ. աշխ., էջ 288:

⁴¹ Հր. Աճառյան, ՀԳԲ, էջ 46:

⁴² Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. 4, էջ 379, Этимологический словарь славянских языков,
М., 1977, вып. 4, с. 227, 235.

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Վ. Տևկանց, Նշվ. աշխ., էջ 31, Հր. Աճառյան, ՀԳԲ, էջ 262, Հայերենի բարբառագիտա-
կան առյուծիկ նյութերի հավաքման ծրագիր, Եր., 1977, էջ 40, С. П. Зелинский, Народно-
юридические обычаи у армян Закавказского края, Тифлис, 1899, с. 7.

⁴⁵ Վ. Տևկանց, Նշվ. աշխ., էջ 114:

⁴⁶ Վ. Տևկանց, Նշվ. աշխ. էջ 31, Ս. Մովսիսյան (Բենես), Նշվ. աշխ., էջ 174, Հայերենի
բարբառագիտական առյուծիկ նյութերի հավաքման ծրագիր, էջ 39:

⁴⁷ Մ. Ե. Ասատրյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Եր., 1962, էջ 214, Հր. Աճառյան, ՀԳԲ,
էջ 262, Կ. Ս. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Եր., 1966, էջ 500:

⁴⁸ Բ. Ե. Զաքարյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ՂԱՆ), Մեղրի, 1982,
թղթապանակ № 12:

⁴⁹ Նորմատիկ տերմինաբանությունն այն համընդհանուր ստանդարտն է, որը հակադրվում
է բարբառային տերմինաբանությանը: (Այս մասին տե՛ս Մ. В. Крюков, Система родства ки-
тайцев, М., 1972, էջ 94):

⁵⁰ Հր. Աճառյան, ՀԳԲ, էջ 540:

⁵¹ Մ. Հ. Մուրադյան, Ճատախի բարբառը, Եր., 1962, էջ 212: Տե՛ս նաև Յ. Կ. Բասմաջ-
յան, Ե. Օսյան, Գավառական բառեր.—Հանդես ամսօրյա, 1901, № 3—4, էջ 116, Գ. Հովսեփ-
յան, Ռոստամ Զալ.—Ազգագրական հանդես, գիրք 7—8, էջ 20:

⁵² Վ. Ա. Պետոյան, Նշվ. աշխ., էջ 135, Մ. Հ. Մուրադյան, Նշվ. աշխ., էջ 212, Հր. Աճառ-
յան, ՀԳԲ, էջ 540, Բ. Ե. Զաքարյան, ՂԱՆ, Արտաշատ, 1980, թղթապանակ № 25: Մարթունի,
1981, թղթապանակ № 8, Ազիզբեկով, 1985, թղթապանակ № 20:

⁵³ Հր. Աճառյան, ՀԳԲ, էջ 540:

Նշված բոլոր բարբառներում պահպանվում են վերոհիշյալ ազգակցությունները նշանակող նորմատիվ տերմինները:

Ստ. Մայխասյանը կոկոն նշում է նաև որպես «մայր» նշանակող տերմին, բայց դժբախտաբար չի նշում, թե ո՞ր բարբառում⁵⁴:

Սրանց համանման կազմավորումներ առկա են հնդեվրոպական այլ լեզուներում և՛ լատիներենում (acca), հունարենում (akka), հին հնդկերենում (akkā), «մայր», բուլղարերենում (kaka)՝ «ավագ քույր», լեհերենում (kak)՝ «մեծ հայր» իմաստներով⁵⁵:

Ասվածից մակաբերելի է, որ հնագույն հնդեվրոպական նախալեզվում, ամենայն հավանականությամբ, եղել է ka > kaka բնածայն բառը, որը հայերենի կակոն է՝ իր տարբերակներով: Այն հանդես է գալիս այնպես, ինչպես մնացած հնդեվրոպական լեզուներում՝ առանց սեռային և սերնդային տարբերման:

ՀԱՆ (Ի)—Զննվող երևույթի տեսակետից ուշագրավ է «մեծ մայր» նշանակող **հան(ի)** տերմինի առկայությունը հայոց ազգակցության տերմինաբանության մեջ: **Հան(ի)**-ն ավանդված է գրաբարյան ազգակցության տերմինաբանությունից⁵⁶: Այն պահպանված է միայն Ջուդայի բարբառում՝ **խանիկ** ձևով⁵⁷:

Որոշ տերմինների կողմից հայոց ազգակցության տերմինաբանության կառուցվածքին բնորոշ սեռային դասակարգման խախտման երևույթի տեսակետից ուշագրավ է Հր. Աճառյանի խյն կարծիքը, որ նախահայերենում հնարավոր է **հանի** տերմինի արականի գոյությունը, բայց թե որն է այն, նա չի նշում: Այս կարծիքին Հր. Աճառյանը հանգում է՝ նկատի ունենալով, որ վրացերեն **հանի** ձևը հայերենից փոխ է առնվել «նախնիներ» նշանակությամբ⁵⁸:

Գրաբարյան **հան(ի)**-ն հ. ե. an > nan > nana բնածայն բառից է, ինչպես հնդեվրոպական լեզուներում լայն տարածում գտած արական և իգական ազգակցությունն ցույց տվող որոշ տերմիններ՝ «հայր», «մայր», «մեծ հայր» և «մեծ մայր» նշանակություններով⁵⁹:

Նշենք նաև, որ այդ հիմքով տերմին է հայոց բարբառային տերմինաբանության մեջ առկա «մայր» նշանակող **նանը՝ նանա, նանե, նանու** տարբերակներով⁶⁰:

Զննարկվող տերմիններին բնորոշ է այն, որ սրանք բազմիմաստ են ոչ միայն հնդեվրոպական լեզվախմբի, այլև՝ մի որոշակի լեզվի և նույնիսկ մի բարբառի սահմաններում: Այդպես է նաև հայերենում: Այսպես՝

պաբ—«հայր», **պաբե**—«մեծ հայր»⁶¹ Ալաշկերտի բրբ.,

պապ—«հայր», **պապո**—«մեծ հայր»⁶² Մուշի բրբ.,

դադո—«հայր», **դադե**—«մեծ մայր» Վանի բրբ.:

Խոսելով ջննարկվող տերմիններին բնորոշ բազմիմաստության մասին, պետք է նկատի ունենալ երկու պարագա.

1. Այս տերմինները հանդես են գալիս նշված ազգակցությունների նշանակման դերում՝ ամբողջովին փոխարինելով այդ ազգակցությունները նշանակող նորմատիվ տերմիններին: Արդյունքն այն է, որ վերջիններս այդ բարբառներում գոյություն չունեն առհասարակ: Սրանք էին Տիգրանակերտի, Սվեդիայի, Խարբերդի բարբառները, որոնցում բոլորովին չկա «հայր» ազգակցությունը նշանակող **հայր** տերմինը և այն փոխարինված է **պապով** կամ **տատով**, իսկ Տիգրանակերտի բարբառում չկա նաև «մայր» ազգակցությունը նշանակող **մայր** տերմինը և փոխարինված է **մամով**:

⁵⁴ Ստ. Մայխասյան, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Եր., 1944, էջ 459:

⁵⁵ Օ. Н. Трубачев. История славянских терминов родства, с. 71.

⁵⁶ Նոր բառգիրք հայկազանս լեզուի, հ. 1, Վենետիկ, 1837, էջ 35, 45:

⁵⁷ Հր. Աճառյան, Զննություն Նոր Ջուդայի բարբառի, Եր., 1940, էջ 20:

⁵⁸ Հր. Աճառյան, Զայնաբանություն վրացերեն հայերենից փոխառյալ բառերի.—Արարատ, 1898, № 8, էջ 367:

⁵⁹ Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 33, Գ. Բ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 300—301, Օ. Н. Трубачев. История славянских терминов родства, с. 28, 33, 76, 3. А. Битарова. Лексика родства и родственных отношений в осетинском языке. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук.—Тбилиси, 1974, с. 94.

⁶⁰ Լ. Աղայանյան, Ծ. Արզումանյան, Գանձակի գավառի և Ծամշաղիի գավառաբարբառի մասին (Փորձնական քերականություն), ԼԻ, Ճեռագիր № 1155, էջ 909, Մ. Ե. Ասատրյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, էջ 229, Բ. Ե. Զաքարյան, ՂԱՆ, Ծամշաղի, 1980, թղթապանակ № 3—4, Իջևան, 1981, թղթապանակ № 5—6, Կրասնոսելսկ, 1981, թղթապանակ № 7, Ղուկասյան, 1983, թղթապանակ № 15, Ախուրյան, 1983, թղթապանակ № 16, Ամասիա, 1983, թղթապանակ № 19 և այլն:

⁶¹ Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. 4, էջ 25:

⁶² Ս. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 177:

2. Նշված ազգակցությունների դերում այս տերմինների հանդես գալը չէր հանգեցնում տվյալ ազգակցությունները նշանակող նորմատիվ տերմինների լրիվ դուրս մղմանը:

Սակայն, անկախ նրանից, այս տերմիններով համապատասխան ազգակցությունների նշանակումը զուգակցվում է նորմատիվ տերմիններով վերջիններիս նշանակմամբ, թե ոչ, կարևորվում է այն երևույթը, որ սրանք հայոց ազգակցության տերմինաբանության շրջանակներում հանդես են գալիս որպես բազմիմաստ, խախտելով ազգակցությունների դասակարգման սեռային, գծային և սերնդային սկզբունքները:

Այս տերմինները՝ պապ, մամ, տատ, ադե, դադո, կակո, հան(ի), նան առաջացել են, ինչպես նշվեց, «մանկական լեզվից», այսինքն՝ այն վանկերի կրկնավորումից, որոնք բնածայն են և առկա «մանկական լեզվում»: Այդ է պատճառը, որ այդ հիմքով կազմված տերմիններն առկա են տարբեր լեզվաընտանիքների լեզուներում և այն էլ տարբեր սեռի, ազգակցական աստիճանի և ազգակցական գծի (ուղիղ ու շեղ) պատկանող ազգակցությունների նշանակման դերում:

Այս երևույթի աղբյուրն, ամենայն հավանականությամբ, բխում է լեզվական ընդհանրությունների ամենահնագույն շրջանից, երբ ազգակցության տերմինաբանության մեջ չէին գործում ազգակցությունների դասակարգման սեռային, գծային և սերնդային սկզբունքները:

Ազգակցությունների գծային և սերնդային սկզբունքների չտարբերման երևույթը կապված էր մարդկային հասարակության պատմության ամենահնագույն շրջանում ամուսնական հարաբերությունների սահմանների անարգելության հետ, որի արդյունքը կարող էր լինել այն, որ այդ հարաբերություններում ուղիղ ու շեղ գծերի, ինչպես նաև ազգակցական տարբեր աստիճանների ներկայացուցիչները տվյալ անձնավորության համար կարող էին հանդես գալ նույն դերում:

Ազգակցությունների սեռային սկզբունքի չտարբերման երևույթը, ամենայն հավանականությամբ, բացատրվում է այն բանով, որ մարդկային հասարակության պատմության այդ շրջանում սկզբունքային տարբերություն չէր դրվում տղամարդու և կնոջ միջև՝ մարդկային տոհմի զոչատուման բնույթի նկատմամբ դեռևս անտեղյակ և անտարբեր լինելու հանգամանքի բերումով:

Այս հանգամանքն իր տարբեր դրսևորումներն է գտել աշխարհի շատ ժողովուրդների լեզուներում: Վեյնախյան լեզուներում ամենամոտ՝ «հայր—մայր», «քույր—եղբայր», «ուսուր—դուստր» ազգակցությունները ցույց տվող տերմինները խմբավորվել են «ավագ տոհմակիցներ», «չափահաս տոհմակիցներ» և «տոհմի երեխաներ» իմաստն արտահայտող բառերի մեջ: Ուսումնասիրողները գտնում են, որ սեռ ցույց տվող մասնիկներն այդ բառերին ավելացել են հետագայում, որով և վերջիններս վեր են ածվել ազգակցության տերմինների⁶³:

Խոսելով արանդա ցեղի մեջ տիրող այս երևույթի մասին, Ա. Սոմմերֆելտն ասում է, որ կնոջ և տղամարդու միջև տարբերություններն աննշան դեր են խաղում արանդա ցեղի մարդու համար, որն, ըստ երևույթին, չգիտի տոհմի շարունակման բնույթը: Վերջինս կարգի է համեմատել այն փաստի հետ, որ հնդեվրոպական լեզուներում սովորաբար բացակայում են էգերի հատուկ անվանումները, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք դեր են խաղում տնտեսական կյանքում և առասպելաբանության մեջ⁶⁴:

Այս համեմատությունը լույս է սփռում հնդեվրոպական ազգակցության տերմինների պատմության հնագույն շրջանի վրա:

Այսպես կոչված մանկական լեզվից առաջացած ազգակցության վերոհիշյալ տերմիններում կամ՝ որ կարելի է անվանել հնագույն պարզունակ անվանումներում (pa, ma) ունենք հնդեվրոպական ազգակցության տերմինաբանության առաջին փուլը, ի տարբերություն երկրորդի, որը բնորոշվում է իգական և արական ազգակցությունները տարբերող տերմինների առաջացմամբ (pa > pater, ma > mater և այլն):

Հայերենի տարբեր բարբառներում և նույնիսկ մի բարբառի շրջանակներում այս տերմինների բազմիմաստության երևույթի առկայության գործում, ամենայն հավանականությամբ, դեր է խաղացել նաև այն, որ հայերենի բարբառային տարբերությունների որոշ մասը, ինչպես ընդունում են շատ լեզվաբաններ, բխում է հնդեվրոպական միասնության շրջանից⁶⁵: Խոսելով

⁶³ Н. Яковлев, Термины мать—отец, сестра—брат, дочь—сын в Северно-Кавказских яфетических и некоторых других языках. Институт этнических и национальных культур народов Востока. Учёные записки, М., 1930, т. 1, с. 156—165.

⁶⁴ А. Sommerfelt, La langue et la société, Oslo, 1938, p. 156. Հղումն ըստ՝ О. Н. Трубачев, История славянских терминов родства, էջ 196):

⁶⁵ Գ. Բ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 246, նույնի՝ Очерки по истории дописьменного периода армянского языка, Ер., 1967, էջ Աղայան, Բարբառային հնագույն տարբերությունները հայերենում.—Տեղեկագիր ՀՄՄՀ ԳԱ, 1958, № 5—8, էջ 79,

այդ մասին, Գ. Բ. Ջահուկյանը նշում է, որ եթե որոշ հատկանիշներ կարող են լինել բարբառների՝ իրար և շրջակա լեզուների հետ ունեցած փոխազդեցության արդյունք, ապա որոշ հատկանիշներ էլ հանգում են հնդեվրոպական միասնության շրջանին: Իսկ թե ինչ ուղիներով կարող էին առաջանալ այդ հատկանիշները, լեզվաբանը նշում է հետևյալները.

1. Հայտնի է, որ դեռևս հնդեվրոպական միասնության շրջանում գոյություն են ունեցել բարբառային տարբերություններ: Հայերենը, գտնվելով տարբեր բարբառների միջև, պետք է ունենար որոշ անցողիկ գծեր, որոնք կարող էին տարբեր չափով պահպանվել:

2. Հնդեվրոպական միասնությունից անջատվելիս, բուն հայկական ցեղերի հետ կարող էին խառնված լինել համեմատաբար փոքրաթիվ այլ ցեղեր, որոնք, ունենալով բարբառային տարբերություններ, դրանք կարող էին փոխանցել հայերենին:

3. Հնդեվրոպական միասնությունից անջատվելուց հետո հայկական ցեղերը կարող էին շփման մեջ մտնել (և մտել են) հնդեվրոպական այլ ցեղերի հետ, ենթարկվելով նրանց ենթաշերտային կամ առչերտային ազդեցությանը, լուրացնել նրանցից զանազան բառեր և արտահայտության եղանակներ: Սրանք նույնպես կարող էին հետագայում պահպանվել:

4. Կերչապես, բնական է կարծելը, որ հայերենն սկզբից լիովին միատարր լինել չէր կարող, և հայկական ցեղախմբի տարբեր հատվածներում կարող էին լինել բարբառային կամ խոսվածքային տարբերություններ⁶⁶:

Ահա սրանք են, ըստ իս, քննարկվող տերմինների բազմիմաստության ազգագրական և լեզվական աղբյուրները:

Հայկական նյութն իր հերթին հաստատում է հնդեվրոպական լեզվական ընդհանրության առաջին փուլում հնդեվրոպական ազգակցության տերմիններում սեռային, գեալին, սերնդային հատկանիշների անկարևորությանը վերաբերող հանգամանքը:

Б. Е. ЗАКАРЯН—06 одном явлении в терминологии родства у армян.— В данной статье рассмотрены термины, которые отклоняются от принципов армянской системы родства (родственные отношения, обозначающие их термины), принципы линейной, половой, поколенной классификации. Из принципа половой родственной классификации следует: каждый термин строго различает пол родства, являясь в роли определенного либо женского, либо мужского родственного обозначения. Из принципа поколенной родственной классификации следует: каждое родственное поколение отличается от других поколений своим физическим состоянием, не выходит за рамки своего поколения и не принимает другое поколение. Из принципа линейной классификации следует: терминологически отличаются друг от друга родство по прямой и косвенной линиям.

Источник этого явления, по всей вероятности, восходит к самому древнему периоду вековых общностей, когда по причине неосведомленности и безразличия к характеру существования человеческого рода, не делалось принципиальных различий между мужщиной и женщиной, следовательно, не было определённости в различении родства.

W. Winter, Traces of Early Dialectal Diversity in Old Armenian, "Ancient Indo-European Dialects", Berkeley and Los Angeles, 1966 (Հղումն ըստ՝ Գ. Բ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 247):

⁶⁶ Գ. Բ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 246: